

Որդւոյն: Ահա այդ օրէն ի վեր կողմն կը կոչուի Առ-Տէր, եւ ի յիշատակ անմոռաց հոն կը կանգնուին մենաստան ու եկեղեցի եւ կը նուիրուին Ս. Աստուածածնի: Յայտնի չէ թէ ո՛վ է անոնց հիմնադիրը եւ նմանապէս թէ ի՛նչ գործունէութիւն կ'ունենան տեղւոյն միաբանները: Միայն այսքանը ծանօթ է, որ ժամանակի ընթացքին կը քանդուի ու կը քայքայուի, բայց Յակոբ վարդապետի հոգատարութեամբ կը վերանորոգուի (1766ին) նորանոր յաւելումներով եւ միաբանական կեանքի փթթումով: Սակայն դժբախտաբար շատ կարճ ժամանակի համար: Վասն զի 1772ին Յակոբ վարդապետ Բատականցին կը նահատակուի եւ իր հաւաքած հօտը կը ցրուի:

«Այժմ Առտէրի վրայ կան երկու եկեղեցի, որոնցմէ մէկուն վրայ կարդացուած է հետեւեալ արձանագրութիւնը՝

«Ի թուին ՉԽԱ. (1292) ի հայրապետութեան Տեան Ստեփանոսի, որ մականունն հա... բարեխօս է առ Աստուած վասն վրկութեան...» (Ազգ. Հանդ., 1911, էջ 43):

Աւանդութեան համեմատ դեռ երկու դար յառաջ Սղերդ եւ Տիգրանակերտ քաղաքները Առտէրի վանքին կը պատկանին եղեր եւ անկէ անոնց հրամաններ կ'ելլէին, սակայն դարմանալի է որ այսպիսի մեծ ճոխութիւն ունեցող վանք մը լուծեան մատնուած է, վասն զի գերացածն ոչինչ է, մինչդեռ շատ բան կարելի էր ակնկալել: Յիշատակարանի մը համեմատ Բարսեղ վարդապետի օրով (ԺԵ. դար) Տիարպէքեր քաղաքը Մշոյ Ս. Կարապետի առաջնորդութեան ենթակայ էր (Հայաստան, 1851, Թ. 51):

Առտէր ալ Բուրտերու կործանարար ձեռքը կը հասնի եւ զայն կը կողոպտէ (հմմտ. Արձագանք, 1882, էջ 313. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 153—154. Ծէրենց, Սրբավայրեր, էջ 121 Բիւզանդիոն, 1897, Թ. 135 եւ նոյնը 1902, Թ. 1571. Ազգ. Հանդ., 1911, էջ 53. եւ Էփրեկեան, Բնաշխարհ. Բառարան, Ա., էջ 249):

Ե.

ՅԻՉԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՆՔԵՐ

Արձկէ քաղքին հարաւակողմը, Բզնունեաց ծովի եզերքը երբեմն կը գտնուէր Արձկէոյ կամ Յիպան կողմն, որ ետքէն ծովակուռ եղած է (հմմտ. Ալեշան Հ. Ղ.,

Հայապատում, էջ 56; ծն. 1. Սարգիսեան Հ. Ն., Տեղագրութիւնք, էջ 250 եւ Հանդէս Ամսօրեայ, 1888, էջ 197. Էփրեկեան, Բնաշխարհիկ Բառարան, էջ 304): Այս կողմին վրայ շինուած էր Ս. Ստեփանոսի վանքը, որ Դաստակ ալ կոչուած էր, որովհետեւ հոն պահուած էր Ս. Նախավկայի դաստակը: «Նօտարք» ի հեղինակը կը գրէ՝ «Ուխտս է ի Բզնունիս մերձ ի Սիփան գիւղն շինեալ ի գրկի Մասիք լեւին հօրի եւ կայ այժմ աւերակ ի դարաւոր ամաց հետէ» (Նօտարք, էջ 166, ծն. 1. հմմտ. անդ եւ էջ 1, ծն. 1):

Վանքս իր անունն ու համբաւը կը պարտի նահատակ Գրիգոր Խլաթեցի Ծերենցի²⁷, որ անուանուած է երկրորդ Վկայասէր. «զի ժողովեաց զիրս բազումս ի մերոց եւ յօտարաց զհնացեալսն եւ զեղծեալսն զծածուկ եւ զանյայտ պատմութիւնս ամենայն սրբոց ի խաւարէ ի լոյս եւ արար զզիրս Յայտաւորաց» (Հայապատում, էջ 560): Ինքն ալ Գրիգոր Յայտաւորներու մէջ մտնելու կ'արժանանայ իր մարտիրոսական մահովը. «... Եւ ի սոյն աւուրս եկն նենդաժոտ եւ անողորմ Բուրդն Բաղիւշոյ ի վերայ աստուածապահ քաղաքին Արձկոյ եւ հարեալ, սպանեալ, սրախողխող արարեալ զբազումս յազգաց մերոց, մանաւանդ զաստուածապատիւ եւ զաստուածապարփակ, զողորմած եւ զերջանիկ վարդապետն Գրիգոր՝ զորդի Ծերին Խլաթեցոյ ի սուրբ ուխտն Դաստակ որ Յիպան վանք վերակոչի (Թովմ. Մեծ., էջ 85, հմմտ. եւ էջ 41—43, տեսնել նաեւ Գրիգոր Խլաթեանցի հրատարակած՝ Յիշատակարան աղէտից Գրիգոր Խլաթեցոյ, պատմական վիպասանութիւն հանդերձ անոր համառօտ կենսագրականով, Վաղարշապատ 1897. հմմտ. եւ Տաշեան, Մայր ցուցակ, էջ 543): Գրիգորի նշխարները մեծ հանդիսութեամբ կ'ամփոփուին «ի սուրբ ուխտն Յիպանոյ՝ Նախավկային Ստեփաննոսի անուամբ կոչեցեալ» (Հայապատում, էջ 562. հմմտ. Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., 452): 1446ին գրուած Յայտաւորքի մը յիշատակարանի մէջ կայ՝ «Իսկ ի մերում ժամանակի... երանաշնորհ վարդապետն Գրիգոր Խլաթեցին ըստ նախնեաց Ծերենց կոչեցեալ... սրով կատարեցաւ... ի վանքն Յիպանայ (որ է նոյն անուամբ յանուն սրբոյն Ստեփանոսի ի պատիւն Բզնունեաց մերձ Արձկէ եւ կայ այժմ

²⁷ Գրիգորի երկերու ցանկը հմմտ. Տաշեան, Մայր ցուցակ, էջ 1074:

աւերակ) ի ՊՀԴ. Թուականին (Նօտարք, էջ 152 եւ անդ ծն. 2): Իսկ 1430 թուականին կը գրուի «ի ՊՀԹ Թուականուջս յաւուրս ընդհանուր կաթողիկոսի Հայոց սաստկացաւ ի վերայ (մեր) մէջ եւ մառախուղ... զի եկն ի վերայ մեր եւ երկրին մերոյ... զօրքն Օթմանայ եւ հեծեալ Ռօճկանայ զերի առին զամենայն երկիրս, հեղաւ անմեղ արիւն բազում, սպանին զմեծ Բարունապետն իմ Գրիգոր եպիսկոպոս ի վանս Յիպանոյ» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Չեռ. Մոստարկու գիւղի, օրինակեալ Գեղամ էֆէնտիէ):

Յիպանայ վանքէն էր նաեւ Յովհաննէս կրօնաւոր տարեգիրը (հմմտ. Նօտարք, էջ 167):

Խաչվէժի մը վրայ ի Յիպան գրուած է 1393ին «ՁՇահիկ վանաց հետ յիշեցէք ի Բրիստոս» (Նօտարք, էջ 1): Նոյն տարին աւետարան մը կ'աւարտի «ի վանս Յիպանայ ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի եւ Վասիլ Թագաւորի սրբոյ» (Ազգ. Հանդ., 1897, Բ., էջ 282 եւ Արձագանք, 1885, էջ 42): 1417ին Ոսկեփորիկ մը կը գրուի «ի վանքս Յիպանայ ընդ հովանեաւ կաթողիկէս սուրբ Ստեփաննոսի եւ սուրբ Նշան Վասիլ Թագաւորի...» (Նօտարք, էջ 53): Երկու տարի վերջ ալ հոն կ'օրինակուի աւետարան մը (Արարատ, 1910, էջ 624): Իսկ 1450ին Յովհաննէս դարձեալ Աւետարան մը կը գրէ եւ կը մաղթէ յիշել՝ «զմիաբան վանացս զառաքինասէր հայրապետն մեր զտէր Մինաս եպիսկոպոսն, զՅովհաննէս արեղայն եւ զՄանուէլ եւ զԱրսէն եւ զՅակոբ քահանայ, որ են ժիր մշակ ի գրուենս սուրբ եկեղեցոյս» (Նօտարք, էջ 166—167, Լալայեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 406, հմմտ. Աղթամար՝ 1460ին գրուած յիշատակարանը):

Այսքան դոյզն են վանքիս մասին հասած տեղեկութիւնները:

Հ. Հ. ՈՍԿԵՆ

ՅՈՒՅՈՒ ԿՆՅԵՐԸՆ ԶԵՌՆԳՐՈՅ Ի ԲՈՒՂՎԵՐԻՆ

(Շարունակութիւն):

15.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Պ Լ Ո Վ Դ Ի Ի

Ի Բ Բ Թ Ժ Զ — Ժ Ե Դ Ա Ր

ԹՈՒՂՎՔԻ՝ 206 + 4: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18½ × 14½ × 5: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ Երկսիւն 12 × 8½: — ՏՈՂՔԻ՝ 26: — ՆԻԻԹ՝ մագաղաք, ողորկ եւ փայլուն:

— ԿԱԶՄ՝ ամուր, փայտեայ, համակ արծաթապատ, վրան արտակարկառ գոյգ մը բանդակներով, սկիզբը՝ խաչելութիւնը, իսկ հետը Ս. Աստուածածինը, Մառնոյ Յիսուսով: Ունի արծաթեայ գոյգ մը փակամէ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿԻ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆԻ՝ մառուր, ընդհանրապէս լաւ պահպանուած: — ԳԻՐ՝ բոլորով, սեւ մելամով: — ՍԿԶԲՆԱԳԻՐԻՐ՝ հրեշտակագիր, վիշապագիր եւ ընդհանրապէս բոչնագիր, բազմերանգ: — ԽՈՐԱՆԻ՝ 4, աւետարաններու սկիզբը (բղ. 32ա, 82ա, 116ա, 170ա). պարզ: — ԿԻՍԱԽՈՐԱՆԻ՝ 10, բազմերանգ, միջակ: — ԼՈՒՍԱՆՅԱՂԱՐԻ՝ բազմաբիւ եւ պղպամ: — ՆԿԱՐԻ՝ 20, սրունց 4ը՝ աւետարանիչները, միւս նկարները կը ներկայացնեն՝ բղ. 3բ՝ Աւետում, բղ. 4ա՝ Երկրպարսիւն Մոգերու, բղ. 5բ՝ Սիմէոն Ծերունի, բղ. 6ա՝ Մկրտութիւն, բղ. 7բ՝ Պայծառակերպութիւն, բղ. 8ա՝ Յարութիւն Ղազարու, բղ. 9բ՝ Չիքենեաց լեռ բարձրանալը, բղ. 10ա՝ Վերջին ընթրիք, բղ. 11բ՝ Ոսկրուայ, բղ. 12ա (վնասուած՝ անհանաչելի), բղ. 13բ՝ դէպ ի Գողգոթայ, բղ. 14ա՝ Խաչելութիւնը, բղ. 15բ՝ Յարութիւնը, բղ. 16ա՝ Համբարձում, բղ. 17բ՝ Գալուստի Ս. Հոգւոյն, բղ. 18ա՝ Վերջին դատաստան: Բաւական յաջող գործեր ունեւ, երանգագեղ եւ ոսկեղուց: — ԴԱՏԱՐԻ՝ քանի մը բուրբ: — ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ, իբր ժօ—ժէ դար: — ԳԻԻԾ՝ ԾԱՂԿՈՂ, ՏԵՂԻ՝ անձանօք: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Այրիանուպոլսոյ Ս. Թորոս եկեղեցւոյ, այժմ 1922էն ի վեր ի պահ Պոլզիւի (Ֆիլիպէ) Ս. Գեորգ եկեղեցւոյ գանձատունը, կրելով Ա. Պոլսոյ Հայրենակց. գոյքերու 166րդ բիւր:

Մատենան է Աւետարան: Մատթէոս (Թղ. 32ա—79ա), Մարկոս (Թղ. 82ա—113ա), Ղուկաս (Թղ. 116ա—168ա), Յովհաննէս (Թղ. 170ա—207ա): Առջեւները գլխաւորագրութիւնք եւ նախադրութիւնք: — Թղ. 19բ—20ա՝ Եւսեբի Կարպիանոսի սիրելի եղբոր ի Տէր, ողջոյն. Թղ. 21բ—22ա, 23բ—24ա, 25բ—26ա, 27բ—28ա՝ Համեմատական տախտակներ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ չունի: Չկան հետքեր ջնջուած կամ ինկած թղթերու:

16.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Պ Լ Ո Վ Դ Ի Ի

Ի Բ Բ Թ Ժ Զ — Ժ Ե Դ Ա Ր

ԹՈՒՂՎՔԻ՝ 304: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19½ × 14 × 6½: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ Երկսիւն 11½ × 7½: — ՏՈՂՔԻ՝ 22: — ՆԻԻԹ՝ մագաղաք, սպիտակ եւ փայլուն: — ԿԱԶՄ՝ ամուր, փայտեայ, կաշիէ խաւով մը, վրան համակ արծաթապատ, ուր կան գոյգ մը նկարներ՝ սկիզբը՝ Խաչելութիւնը, եւ հետը՝ Համբարձումը: Կազմի ներք լարապատ: Ունի նաեւ արծաթեայ մասնաւոր կափարիչ-փակամէ, վրան նկարներով 12 աւաքներու: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿԻ տեղ կը ծառայեն սկզբի մէկ եւ վերջի երկու մագաղաքեայ բուրբերը: — ՀԱՆԳԱՄԱՆԻ՝ մառուր եւ լաւ պահպան:

նուած բուրքեր (14 հատ) : — ԳԻՐ՝ մանր բուրքեր, յստակ եւ գեղեցիկ, մեղմը սեւ ընտիր : — ԶԱՐԳԱ-ԳԻՐ՝ սկզբնագիրք աւետարաններու հրեշտակագիր, կենդանագիր եւ ընդհանրապէս բազմագիր, յաջող գործեր, երփնագոյն եւ ոսկեգործ : — ԽՈՐԱԳԻՐ՝ Եւ ՎԼԽԱԳԻՐ՝ բազմագիր : — ԽՈՐԱՆՔ՝ 6, որոնց չորսը աւետարաններու սկիզբը, շէր : — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ Եւ ԶԱՐԳԱՆԿԱՐ՝ 8 : — ԿԱՐՔ՝ 17, որոնց 4ը՝ աւետարանիչները իրենց երկերուն առջեւը (թղ. 28թ, 107թ, 159թ, 240թ) : Մնացեալները կը ներկայացնեն՝ թղ. 2թ՝ Աւետում, թղ. 3ա՝ Մագերու երկրպագութիւնը, թղ. 4ա՝ Մկրտութիւնը, թղ. 5թ՝ Պայծառակերպութիւնը, թղ. 6ա՝ Յարութիւն Ղազարու, թղ. 7թ՝ Զիբեմեաց լեռ բարձրանալը, թղ. 8ա՝ Վերջին ընթրիք, թղ. 9թ՝ Ոտնուայ, թղ. 10ա՝ Խաչելութիւնը, թղ. 11թ՝ Յարութիւն, թղ. 12ա՝ Համբարձում, թղ. 13թ՝ Գալուստի Ս. Հոգւոյն, թղ. 14ա՝ Վերջին դատաստանը : Բոլորն ալ յաջող եւ շքեղ գործեր եւ ուշագրաւ որ- քան իրենց նարտար ծաղկումներով, նոյնքան եւ ներկերու հարազատութեամբ : — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԻՐ՝ 229 հատ, այլազան եւ նոյն, նոյնպէս երանգագեղ եւ ոսկեգործ : Կարծէ յիշել Մատթէոսի խորանիմ կցուած շքեղ մանրանկարը, որ կը ներկայացնէ Մա- րիամ Աստուածածինը մանուկ Յիսուսով եւ 12 առա- քեալները, իւրաքանչիւրն առանձին : — ԳԱՏԱՐԿ՝ բոլոր նկարներուն ետեւի էջերը, ինչպէս նաեւ թղ. 1, 15ա, 16թ, 17ա, 18թ, 19ա, 20թ, 21ա, 22թ, 23ա, 24թ, 158թ, 302թ, 303, 304 : — ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ, կ'են- քաղբուի իբր ժՁ—ժԷ դար : — ԳՐԻԶ, ԾԱՂԿՈՂ, ԿԱԶՄՈՂ՝ անծանօթ : — ՏԵՂԻ՝ անյայտ : — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Ադրիանուպոլսոյ Ս. Թորոս եկեղեցւոյ, 1922էն ի վեր ի պահ Պլովդիւի (Ֆիլիպք) Ս. Գեորգ եկեղեցւոյ գանձատունը, ներկայացնելով Ա. Պոլսոյ Հայրենակց. գայեբու ցանկին 168րդ քիւր :

Մատեանս է Աւետարան : Մատթէոս (թղ. 29ա—104թ), **Մարկոս** (թղ. 108ա—155ա), **Դուկաս** (թղ. 160ա—237թ), **Յովհաննէս** (թղ. 241ա—302թ) : **Առջեւները գլխակարգութիւնը եւ նախագրութիւնը** : — թղ. 15թ—16ա՝ **Եւսեբի Կարպիանոսի սիրելի եղբոր ի Տէր ողջոյն**. եւ թղ. 17թ—18ա, 19թ—20ա, 21թ—22ա, 23թ—24ա՝ **Համեմատական տախտակներ** :

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ չունի : **Չունի նաեւ ո եւ է հետք կամ նշան ինկած կամ ջնջուած թերթերու :**

17.

ՔԱՂՈՒԱՅՔ-ԿԱՆՈՆԱԳԻՐՔ Ի ՍՈՑԻԱՆՈՒՅԻ = 1678

ԹՈՒՂԹ՝ 32 : — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 19½ × 15½ : — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին 15½ × 11 : — ՏՈՂԹ՝ 23 : — ՆԻԹ՝ բուրք պիւն եւ որդիկ : — ԿԱԶՄ՝ կաշեկազմ հին ռնով. ներսը թղթապատ. ամուր : Երկու կողմն վրայ՝ մէկական փոքրիկ խաչեր, ոսկեգոծ : — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ : Կը կարծուի սակայն թէ թղ. 15—16ի եւ թղ. 24—25ի մէջտեղէն կը պակսին մէկա-

կան քերթ, հետեցնելով գրութեան շարայարու- քեմէն : Նոյնպէս առաջնորդուելով մատեանս ներկայացնող երեք պրակներու ստորին համարանիշներէն (19—16), սխալ պիտի չըլլար կարծել թէ ան սկիզբէն ունեցած է Ա.—ԻԲ. պրակներն եւս (իբր 264 էջի չափ), որոնցմէ ո եւ է հետք չկայ ներկայիս : — ՄԱ-ԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի : — ԳԻՐ՝ նոսր, սեւ մեղմով : — ՍԿԶԲՆԱԳԻՐ՝ պարզ, կարմիր մեղմով : — ԶԱՐԳԱՆԿԱՐԿ՝ Եւայնի՝ չունի : — ԳԱՏԱՐԿ՝ թղ. 31 եւ 32 : — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԻԷ (= 1678) Յու- նուար 2 : — ԳՐԻԶ՝ Գրիգոր երէց : — ՏԵՂԻ՝ Պեր- գամա : — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Գոկո. Յովհաննէս Մանուկեանի ի Սոփիա, որ ձեռք բերած է գայն Շու- մէնի մէջ :

Մատեանս է Քաղուածք մը եկեղեց. պատճական կանոններու, խրատներու եւ զիտեղեաց, գլխաւորաբար քահանայից յատուկ : Կը սկսի առանց ճակատի եւ մասնա- ւոր խորագիր մը չունի : Կը բովանդակէ՝

Թղ. 1ա. Համառօտ ժողովեալ ի կանո- նաց սրբոց հարց. յեպիփանու Կիպրացու : — Որ զչորէք շարքին եւ զուրբաթն. կամ զա- ւաջաւորն. կամ զաղուհացն. զպահն վար- դավառին. եւ զաստուածածնին եւ զուրբ յաջին. եւ զաստուածածնին (sic) շարքին լու- ծանէ կամաւ նղովեսցի. եւ զղջացեալ ամի մի ապաշխարեսցէ...

Կղեմայ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ եթէ վաչիս կամ տոկոսիս պահանջեսցի...

Կեաքեայ կանոն. կին չնա եւ զմանուկն սպանանէ...

Թղ. 1բ. Գրիգոր Լուսաւորչի : Մանուկն որ առանց կնքոյ մեռանի...

Ներսէսի Կեաքիո ութ օրեայ մանուկն մկրտել...

Բարսղի թէ քահանայ ի պատարագի իցէ...

Սիոնի Հայոց կաթողիկոսի : Թէ երեսայն հիւանդացի. եւ քահանայն հեռի իցէ...

Թղ. 2ա. Յառաքելական կանոն : Կարգեցին առաքեալքն եւ եղին Հաստատ եւ եղին Հաստատութիւն թէ մարդ ոք առ ամենայն ընտանութիւն մարմնոյն իւրոյ. մի մեր- ձեսցի...

Ներսէսի Կաթողիկոսի. եղբոր Գրիգորի սիրելի Հայոց կաթողիկոսի : Մի ոք յա- րեան մերձաւոր ազգակցաց պսակ աւրհնու- թեան զիցէ...

Թղ. 2բ. Ի Լեւոնի. եւ Կոստանդիանոսի. եւ ուստիանոսի աւրիանցն. Երկրորդ տի- տասէ է : Խափանել արժան է զայնոսիկ ա- մուսնութենէ. որք...

Սեւանեայ : Կնքաւ որ թէ պոսնկեա- ցին...

Թաքէոսի առաքելոյ : Որք մի միամօր կաթամբ սնեալ են աւտարք. չէ պարտ ա- մուսնանալ...

Նարին : Թէ ազգականք ամուսնանալ... Թղ. 3ա. Սեւ անտեայ : Ընդ քեռ կամ զորքանչի...

Թաքէոսի առաքելոյ : Որ ոք անժուժա- բա(ր) լլլկէ զինքն...

Անկուռականոյ : Անասնազէտն թէ կու- սան էր...

Նիկիական կանոն : Որ կուռութիւն խոս- տացան...

Թղ. 3բ. Բարսղի : Քահանայութիւն է... Աքանասի : Ի սուտ քահանայէ մկրտ- տեալն...

Հարցն հետեւողացն : Որ ոչ իցէ արժանի ճաշակել ի խորհրդական սեղանն...

Թղ. 4ա. Աքանասի : Թէ ոք անցաւոր է... Նիկիոյ : Բայց թէ յեա այն կոյս կենաց...

Կղեմայ հայրապետին : Երեց կամ սար- կաւազ որոշեալ եպիսկոպոսէ...

Հարց : Զքահանայ ի մեղս թէ ոք հաւատ- տեալ զիտացէ...

Սիոնի կաթողիկոսի Հայոց : Ժողովրդա- կանք. որք պէս պէս սխալանաց բանադրեալ...

Թղ. 4բ. Նարին : Որք զբերի վարին ա- նօրինաց...

Բարսղի : Կին եթէ կամաւ չնացաւ... Անկիառիայ : Որք ի բռնութենէ հեթա- նոսաց...

Սահակայ կաթողիկոսի. ոչ մեծին : Երէց որ բորոտի կամ ուրկանայ... Թղ. 5ա. Փիլիպոսի առաքելոյն : Շուն փոխանակեալ ոչխարի...

Նիկիայ երկրորդ եւ կանոն գրեաց : Եթէ ոք զարչեսցի...

Բարսղի : Մի ոք իշխեսցէ... Թղ. 5բ. Նիկիայ : Ո(ր) չէ պարտ Կիրա- կէի ազօթան գալ ծունը կրկնել...

Հարցն : Զառն զակն. եւ թէ որդիս ծնցի...

Կղեմայ : Երկիցս ի տարոջն ժողով լի- ցի...

Նոյն : Եթէ ոք զկուս բռնաբառեալ կալցի...

Աքանասի : Թէ ոք միականի է... Կղեմայ : Եթէ ոք խեղակամբ է...

Նարին : Խուլ եւ կոյր մի լիցի եպիսկո- պոս...

Աքանասի : Եթէ ի կանանց քահանայ... եւ այլն :

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Թղ. 30բ. — Փառք... Արդ զրեցաւ, այս ցանկալի զիրքս որ է նման ծաղկի եւ զեղեցիկ բուրաստանի. որ է նման շար մարդարտի : Որ կոչի քա- զուածք. զի կայ ի սմայ ազգի ազգի եւ զա- նազան բանք պիտանիք. եւ յողչաճ խրատք. զոր եւ այլեւայլ զբնաց անդեղեալ կատարե- ցաւ : Ի յերկիրն անխցոց. ի քաղաքն որ կոչի պէրզամայ : Ի վիճակն յովհաննու աւե- տարանչի : Ի թվականիս Հայոց ՌՃԻԷ : Յունվար ամսոյ : Բ. օրն. զէրթի :

Բայց աղաչեմք զհանդիպողքդ այս սուրբ կտակիս եւ աստուածա(յ)ին բուրաստանիս : Յորժամ կարդայք կամ օրինակէք զսայ. յի- շեցէք ի Քրիստոս. զգծող սորին : Գրեզոր էրէց. լուի անուամբ. եւ ոչ զործով : Եւ դար- ձեալ յիշեցէք զհայոյն իմ Գօլվաթ խօջէն. եւ մայրն իմ, Գուլգատէն : Եւ զեղբայրն իմ. Յովսափն. եւ Սահակն. զՇահամիրն. եւ Յովհանն. Տէրուն. եւ ամենայն յարեան մերձաւորան իմ. զկենդանիս եւ զհանդու- ցեալան : Յիշեցէք առ Քրիստոս. եւ ողորմի ասացէք : Եւ աստուած որ առատն է ի սուր բարեաց. տացէ քեզ յիշողացդ. եւ մեզ յիշե- լոցս զիւր սուրբ արքայութիւնն. եւ նմայ վրտք յաւիտեանս. ամէն :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Նոյն կազմին մէջ ձե- ուղիր մատեանիս կը հետեւի տպագիր բա- ուարան մը ուսեբէնէն Հայերէն լեզուով, հին տիպ, տարին անյայտ, թուագրուած էջ 125— 243, որ կը սկսի սա խորագրով՝ «Աստանօր հետեւին անուանք, բառք եւ բայք՝ Հայոց ընդ ուսաց այբ տառի» :

18.

ԽՈՐԱՅՐԴԱՏԵՏՐ

Ի Լ Ո Մ

ԹՈՒՂԹ՝ 23 (+ 4 յանդաւանակն՝ կազմի) : — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 28 × 19½ × 1 : — ԹԵՐԹ՝ 2 (Ա.Ղ՝ 10, Բ.Ղ՝ 12 բուրք եւ 1 բուրք անթիւ) : — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսին 18½ × 12½, լուսանց՝ 1 սնդմ. : — ՏՈՂԹ՝ 23 : — ՆԻԹ՝ բաւականայ բուրք յղկուած, ողորկ : — ԿԱԶՄ՝ արեւելեան, շագանակագոյն կաշե- պատ, կողքերուն վրայ ծաղկուններով : — ՀԱՆԳԱ- ՄԱՆՔ՝ ընդհանուր ամամբ լաւ պակասուած : — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի : Իբր պահպանակ կը ծառայեն սկիզբի 4 (երկուք բաց կապոյտ եւ եր- կուք սպիտակ) եւ վերջաւորութեան 2 (բաց կապոյտ) քերթեր, յետամուտ, տարբեր բուրքէ, որոնց վրայի մի քանի յիշատակութեանց մասին՝ իր կարգին : —


200ա. Յովհաննէս՝ Թղ. 201ա—263բ: Նախադրութիւն չունին:

Թղ. 264 եւ Թղ. 265 կրկնադիրներուն վարի երեսները, ինչպէս նաեւ Թղ. 266ն ու Թղ. 267ը, կը կարծուին ըլլալ մասեր սրբոց վկայարանութենէ, հետեւցնելով մեծ դժուարութեամբ եւ լուսանկարումի օգնութեամբ հազիւ կարողացուող քանի մը կցկտուր բառերէ (ինչպէս՝ Թղ. 265բի մէջ. — «... պատասխանի ետ սուրբ... եղբարք աւատլ այլ եւս այս աւետեալ... յաքանէ ով

Այս ընթեռնուն աւետարանի սկսեալ ի գատկեմ մինչեւ ցնոր առաւուտուն»: Հաւանաբար տողերս կը ծառայեն իբր մաս Աւետարանացոյցի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՅ. 1. Թղ. 200բ. Բուն գրչինը, գրուած Ղուկասու աւետարանէն վերջ մնացած պարագ տեղը, վերոյիշեալ աւետարանացոյց հատուածի վարի կիսուն, 10 տող, որմէ մեծ ճիւղերով եւ դժուարութեամբ կը կարդացուին միայն.

«Շնորհիվ ամենակալին Աստուծոյ կատարեցալ ավետարան



2. Նկար:

նոցա... մեկ եւս ոչ ել զանդր ութ ի բնա... արխիոնէ նոցա եւ մեր... աւարովք որ բեր...» եւայլն. Տես նկար 1 (էջ 83—84):

Թղ. 200բ ճակատը՝ Ղուկասու աւետարանի սրբուած վերջամասին վրայ (վարի երես) վերագրուած է վերջէն անինամ բորբոքիբով՝ տասը տողի չափ՝ հետեւեալը (վերին երես), մասամբ ընթեռնելի՝ երկրորդ տողէն սկսեալ. «... խոչ կար եւ որդի մարդոյ առ: Վերջ... նանու: ծը: այս են կամք: վերջ... երկոտասան յոհաննու ճլք: զայս հաւանցեալ ընդ ձեզ միջ... Ղուկասու: խղ: ել ի լեառն կալ աղաւթն: վերջ Ղուկասու: իլ: իբրեւ տիւ եղեւ ել գնաց. վերջ. գնաց... մաթեոսէ: ճկղ: ելեալ յս ի կողմանս: վերջ. զ... Ղուկասու: զը. բայց արդարեւ ասեաց: վերջ: ...»

ս. ի թվականութեանն Հայոց ՆժԵ. Զգրողս սորա յիշեալիք. Եւ Աստուած յիշողացտ ողորմե(ս)ցի ամեն... Եւ ողորմեա՛ կիրակոս երիցոյ... ծնողացն (անընթեռնի)»

(Տես նկար 2:)

2. Թղ. 264ա—265բ. Նոր՝ վերակազմողի յիշատակարանը ՉՂԸ (= 1346) թուականէն, երբ մատենան ինկած թերթերու տեղ նոր լրացումներ ունեցած է.

«Փառք եւ պատիւ հաւր անծնին անեղ աներր իսկականին: Եւ միածնի նորա բանին: Անճառ ծննդեանն հայրենին: Եւ սուրբ հոգւոյն շնորհատուին, եւ ի նոցունց միշտ

ելողին եւ զարարածս լցողին: Կատարողի արարածին: Ի յայժմոյս եւ յազազային. եւ յանսպառ յաւիտենին ամէն:

Արդ ցանկացող եղեալ այսմ լուսերանք եւ վարդալիթիթ հոգէնորոգ բու(ր)աստ(ան)իս. քառավտակ դետոցս, եւ աստուածարան սուրբ աւետարանիս պատուելի այրն Աստուծոյ Խորով շահն, եւ ետ զսա վերստին նորոգեալ, զոր տէր Աստուած նորոգեաց զմանգութիւն նորա. ամէն: Ի նեղ եւ դառն ժամանակիս յորում մեծ մայրաքաղաքն Թէոդաւալիս, անսպառ եղեւ ի մարդոյ, եւ անասնոյ ի յաղղէն Հաքարու եւ Իսմայէլացոցն: Նաեւ արեւելեանքն ամենայն, եւ տուն վրայ. որ յոլովք ի սուր սուսերի մաշեցան եւ այլք ի սովոյ մեռանէին. որ ոչ ոք կարէ պատմեալ զանցս աղետիցս զոր եկն ի վերայ ազգիս քրիստոնէից եւ այն վասն ի թաղում առաւել յաճախ մեղաց մերոց: Որ բազում տանուտեարք եւ քահանայք մուրողք տարաշխարհիկ շրջին ի հայրենի դաւառաց: Եւ ոչ ինչքն աւգնական, զի հասարակաց էր վիշտն սովոյ եւ տաղնապն յանաստուած աղղէն: Որպէս եւ երուսաղէմացոյն առ բաբելոնաւն: Լուր Երեմիաս պիտէր որ լայր զանըմբռնելի վիշտս քրիստոնէից: Եւս առաւել զազգիս Հայոց:

Արդ՝ աս՝ զայս ամենայն յոչինչ համարելով ստացաւ զսա զաւակ ի Սիրոն. եւ սանրեալք ելլից վերնոյ քաղաքին Երուսաղէմի: Եւ զղեակ ապաւինի, ի հնարից եղեռնագործին, եւ նաւ ուղղակի անցուցանել ընդ ամեհի ալեացն կուտակաց ի ծովամէջ ալեկոծութեան կենցաղոյս հասանելով ի նաւահանգիստն աստուծոյն Քրիստոս: Եւ աստեացն ի վարժունքն ուսումնասիրաց: Ի յիշատակ իւր եւ եղբաւրն իւրոյ Շիրին շահին եւ ծնողացն Ումեկին եւ թագուհէ պարոն շահին եւ սիրատիկնայ փոխեցելոցն ի Քրիստոս: Զոր տէր Աստուած խնայեց ի արացէ գնոսս նահապետին Արրահամու. ամէն:

Արդ եղեւ վերջին նորոգումն սուրբ աւետարանիս ի թուականութեանն Հայոց ՉՂԵ: Ի գաւառիս խաղտեաց, ի յանառիկ զղեակիս որ կոչի բարերդ, ձեռամբ սուտանուն սարկաւազի Յոհաննէս Նահաշի եւ կազմողի: Առ դրան սրբոյ Աստուածածնիս: Եւ սրբոց Հրեշտակապետաց: Ի Հայոց վերայ դիտողութեան. տեառն Միսիթարեա՛. եւ ի հայրապետութեան այսմ գաւառիս տէր Սահակայ եւ տէր Ստեփաննոսի: Եւ ի թաղ. Հայոց Կոստանդին եւ զարարածս լցողին: Կատարողի արարածին: Ի յայժմոյս եւ յազազային. եւ յանսպառ յաւիտենին ամէն:

տանդի: Եւ ի յանութեան աշխարհին Հոռոմայ Յարաթնային որ էր այր բարեպաշտ: Զի յոլովք ի յաշխարհի նորա ընուին հացիւ զսովեալ անձինս, զոր տէր Աստուած յերկար աննէ զպետութիւն նորա. ամէն:

Արդ, որք աւելիք ի սմանէ քահանայք. եւ ժողովուրդք յորժամ աւելիք ի սմանէ. յիշեալիք ի սրբութաց. եւ ի մաքրամատուց աղաւթս ձեր. զբարեմիտ այրն զԽորով շահն. եւ զայլ ամենայն համացեղս իւր. զվերոյդերեալն: Եւ Քրիստոս յոյսն ամենեցուն. որ առատ է ի տուրս պարգեւացն: Յիշողացդ եւ յիշելոցս ողորմեացի առ հասարակ: Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն»:

Հմմտ. Յ. Քիւրտեան, Հանգ. Ամս., 1926, էջ 344—345: Նոյն՝ Մասիս Տարեգիրք, 1935, էջ 191: Նաեւ՝ Պրոֆ. Պ. Յոնէֆ «Յուցակ Ձեռագրաց եւ Հնատիպ մատենից Ազգ. Մատենադարանի ի Սոփիա» (Проф. Б. Цоневъ, Описание на Ржкописитѣ и Старопечатнитѣ кничи на Народната Библиотека въ София), Սոփիա 1910, Թ. 580/163, էջ 517: Ն. ԳԱՍԱՊԵԱՆ

ՆԵՐՍԻՍԻ ՏԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ԲԱՆ ՏՆՏԵՍԻՆ*

Եւ ասէր առ աշակերտսն, այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես: Եւ եղեւ զնմանէ ամբաստանութիւն. որպէս թէ վատնիցէ գինչս նորա: Ըստ կարգի առակքս այսոքիկ՝ եւ զորութեամբ խորհրդոյ ունին առ միմեանս զյարմարումն երեքեանս: Նախ՝ անառակ որդւոյդ, եւ որ տնտեսիս է, եւ մեծատանն: Քանզի անդ ցուցաւ շնորհօք թողութիւն տուեալ հաւատացելոց՝ եւ ի Քրիստոսի, որ վասն մեր կամաւոր մահուանէն, որք եւ անդէն սկսեալք միաբանութեամբ եղեւ եկեղեցի սուրբ ընդ ամենայն տիեզերս գումարեալ յանունն Քրիստոսի, յորում են տնտեսք զանազան սպասաւորութեամբ, եւ նախ հոգւոյ

* «Հանգէս Ամսօրեայ» ի մէջ լոյս տեսն Ներսէս Լամբրոնացոյ «Ներքողեան ի վերափոխումն Աստուածածնի» (1925, էջ 355 եւ 442) եւ «Ճառ յանառակ որդին» (1928, էջ 120 եւ 311): Իսկ այսօր հնարաւորութիւն կը տրուի ինձ սոյն Ուսումնաթերթին մէջ տպագրելու նոյն Հայրապետին «Ի բան տնտեսին», որմէ արտագրութիւններ կան իջմիածնի եւ Չմմառի եւ ուրիշ Մատենադարաններու ձեռագիրներու մէջ: Հրատարակութիւնը կ'ըլլայ Երուսաղէմի Ս. Յակոբիանց վանքի Թ. 154 ձեռագիրի վրայէն: Դժբախտաբար ձեռագրին զրիչը լաւ բնագիր մը աչքին առջեւ չէ ունեցած եւ բաւական տեղեր միջին կը մնան: Կիտաղբուրթիւնը՝ խեղճ: